

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ**

- Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում **Կառավարությունը հայտարարում է արտակարգ դրություն**, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին¹:
- **Արտակարգ դրությունը ՀՀ ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում** հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության իրավական հատուկ ռեժիմ է, որը հայտարարվում է միայն ՀՀ սահմանադրական կարգին անմիջական վտանգ սպառնալու դեպքում, ներառյալ՝ **արտակարգ իրավիճակները**²:
- Արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության որոշումը, ինչպես նաև որոշման մեջ կատարվող փոփոխությունները և լրացումները **անհապաղ հրապարակվում են հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով**, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա **զանգվածային լրատվության այլ միջոցներով**: ՀՀ կառավարության արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշումն **ուժի մեջ է մտնում հրապարակման պահից**, եթե ՀՀ կառավարության որոշմամբ ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ³:
- ՀՀ **ամբողջ տարածքում** հայտարարվող արտակարգ դրության ժամկետը չի կարող գերազանցել **30 օրը**, իսկ **առանձին տարածքներում՝ 60 օրը**: **Նշված ժամկետների ավարտից հետո արտակարգ դրությունը դադարում է**: Եթե մինչև նշված ժամկետների ավարտը չեն վերացել այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել արտակարգ դրություն հայտարարելու համար, արտակարգ դրության ժամկետը կարող է **երկարաձգվել** ՀՀ կառավարության որոշմամբ՝ արտակարգ դրություն հայտարարելու համար սահմանված կարգով և սահմանված ժամկետները (համապատասխանաբար 30 և 60 օր) չգերազանցող ժամկետներով⁴:

¹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 120, մաս 1:

² «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, հոդված 1, մասեր 1,2:

³ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 2:

⁴ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մասեր 1,2:

- Եթե արտակարգ դրություն հայտարարելու համար **հիմք ծառայած հանգամանքները վերացել են մինչև արտակարգ դրության գործողության ժամկետի ավարտը, ապա արտակարգ դրությունը դադարեցվում է ՀՀ կառավարության որոշմամբ**, որը ենթակա է անհապաղ հրապարակման հանրային հեռուստատեսությամբ, հանրային ռադիոյով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա զանգվածային լրատվության այլ միջոցներով: ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից⁵:
- Արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում **իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ⁶: Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել** արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը⁷:
- Արտակարգ դրությունը **վերացնելու** կամ արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը **չեղյալ հայտարարելու՝ Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունք ունի խմբակցությունը⁸:**
- **ՀՀ Աժ խմբակցության ղեկավարը կամ քարտուղարը կարող է ներկայացնել** արտակարգ դրությունը կամ արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված որևէ միջոցառում **վերացնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ**: Նախագծի հետ ներկայացվում է դրա վերաբերյալ խմբակցության որոշումը: Եթե որոշումը չի ընդունվում, ապա նման նախագիծ կարող է ներկայացվել ոչ շուտ, քան մեկ ամիս հետո⁹:
- **Ազգային ժողովի նախագահը** արտակարգ դրությունը **վերացնելու** կամ արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը **չեղյալ հայտարարելու** մասին **Ազգային ժողովի որոշումն ստորագրում և հրապարակում է անհապաղ¹⁰:**
- Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքների վերացման և այլ հրատապ հարցեր լուծելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել արտակարգ դրության տարածքի **պարետատուն**, որը իրականացնում է արտակարգ դրության տարածքում արտակարգ դրության

⁵ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 1:

⁶ ՀՀ Սահմանադրություն, հոդված 120, մաս 2, «Աժ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 48, մաս 1:

⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 120, մաս 3, «Աժ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 107, մաս 4, «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 2:

⁸ «Աժ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 107, մաս 1:

⁹ «Աժ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 48, մաս 3:

¹⁰ «Աժ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, հոդված 107, մաս 5:

իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումը:
Պարետատունը ղեկավարում է ՀՀ կառավարության նշանակած պարետը¹¹:

- Արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով ընդունված և ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակման հետ կապված **իրավական ակտերը կիրառվում են միայն արտակարգ դրության գործողության ժամկետի ընթացքում և տարածքում, ուժը կորցրած են համարվում արտակարգ դրությունը դադարեցնելու պահից**¹²:

¹¹ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մասեր 1,2

¹² «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, հոդված 14, մաս 1: